


զանց ըլլայ՝ այս զօրացուցիչ դարմանը փոխանակ օգնելու կը փնտայ. մորթը շիկակարմիր կերպարանք կը ստանայ, եւ մանուկը մորթոյ սաստիկ գրգռութեան չկարենալով դիմանալ, ջղաձգութեամբ կը մեռնի: Այսու ամենայնիւ կան բազմութիւն տղուրդք, զոր օր. խաւրիչ լինանքանկք, որոնք նորեկ մանուկն անողորմաբար 24 ժամ աղի մէջ կը դնեն որպէս զի մորթը զօրանայ. ստուգիւ մորդիկ (այսպէս ըսելու եմք) անեղծ բնութիւն մ'ունին: — Կսեաւ ի Գերմանիա տեղ տեղ տակաւին աղելը կը գործադրուի, բայց միայն խորհրդական եղանակաւ: Իսկ ի Ռայնֆայց մանկան ականջաց ետեւն, եւ այլոք՝ խանձարեղ մէջ՝ թղթապատ աղ կը դնեն կամ նորածին մանկան լեզուին վրայ պողպտնայ մ'աղ: Խնէք, իմաստութիւն յառաջ կը բերե այս՝ կըսեն, եւ չար ոգիէ կը պահպանէ: »

Տ Ն Տ Ե Ս Ս Վ Վ Ե Ն

Ժի՛նէ:

Ո՛վ արգեօք կրնայ ուրանալ այն վայելքն ու հաճութիւնը, զոր կը զգան մարդիկ երբ օրւան աշխատութենէ եւ յոգնութենէ ետեւ բազմոցի վրայ ընկողմանած, գլանիկի կամ ծխափողէ կապուտակ ծուխը՝ տակու ձեղունք բարձրացած կամ պատ ի պատ երկայն մանուածոջ շըջանով, գծերով, ալիքներով եւ կոհակներով լռիկ եւ փնջիկ սենեկի մէջ տարածուած կը տեսնեն: Բայց միայն օրւան աշխատութենէ ետեւ չէ որ գլանիկ ծխելով փոքր հանգիստ կը վայելին, առաւօտեան խահուէն ծխախոտին հետ կը համեմեն. նաեւ աշխատութեան ժամանակ բայց ի մասնաւորի բացօթեայ վայր մը՝ հաճոյական սփոփում մը կը մատուցանէ ծխախոտը: Բնականաբար վայելման ու հաճութեան աստիճանը բուսոյն որպիսութենէ կախում ունի: Բայց թէ ծխախոտն իւր հետութեամբն հանդերձ որչափ օրմանգներ իւր հետը կը բերէ՝ իւրբանջիւր ումէք անտարակոյս յայտնի է: Հաստատուած է որ գլանիկ ծխելը փնտսակար է. որովհետեւ շատ անգամ մարտդութեան գժուարութիւն կը պատճառէ: Գլանիկներու մէջէն շատ վանայի ծխախոտն ամենն աւելջ փնտսակար է մարմնի որ կազմակերտին: Ամերիկայի մ'սամեն օր ծխախոտի այս ծանր տեսակէն 14—15 գլանիկ ծխելով սրտի ունեցաւ եւ երբ բժշկին խորհրդոյն չանսալով ծխելը շարունակեց՝ կեանքը սուժեց: — Պերլինցի վաճառական մը, որ օր ըստ օրէ 20—30 ձալանայի գլանիկ կը ծխեր՝

բնանիկոտի (nicotin) թոյնը ստացաւ, որ ի սկզբան անգ սաստիկ ջղագրգռութիւն էր, սակայն քիչ մը յետոյ ռեգանջ ներքին մատուցըր տապացան որով քիչ ժամանակուան մէջ ռեգան միջնորմը բոլորովին խանգարեցաւ: — Պերլինցի բժիշկ մը արանց փողի, ռեգանջ եւ ականջի ցաւոց պատճառ կը համարի չափազանց գլանիկ ծխելը: Ծխափողով ծխելով վերջոյնեալ հիւանդութեանց շատ քիչ անգամ կ'ենթարկուի: Փարիզի սպանդանոցին Dr. Bourtier վերատեսչին կատարած փորձն յայտնապէս կը ցուցնէ այս արդիւնքը: Կոյն գիտնականը ծխախոտի ծխոյն առջեւը 4 լիտր յօշուած միս դնելով՝ մտոյն վերին մակերեսոյթը թուխ գոյն մը ստացած էր: Կոյն միւր կրկին անգամ նօթի շտեմ մ'առջեւը նետուեցաւ, շուրջ գոգմակութեամբ հետացաւ. եւ չէր ուզեր ուտել: Բայց միւր նուրբ նուրբ յօշէլէն եւ ուրիշ կերով խառնելէն ետեւ, շուն առանց յապաղելու կ'լլնց, բայց ասոր վրայ անմիջապէս սաստեցաւ թունաւորածինչաններով: Միեւնոյն փորձը հորթու եւ ձիւ մտով ալ կատարուեցաւ, որ ծխոտելէն ետեւ խորոված՝ մկանց առջեւը նետուեցաւ: Իսկոյն սաստեցան, թէ եւ խորովելով ծխոյն մի մասն գուրս էր ելած: Ծխախոտն առանց փնտսու առողջութեան վայելելու համար բազմութիւն ծխախոտ պաշտպանը կը հաստատեն թէ ոչ երբեք նօթի՝ այլ միայն ընթիլքէն վերջը ծխելու է, եւ ուտելը ներս կ'լլելու չէ: Բայց աստի՛ ինչպէս ամենայն ուրեք նմանապէս հոս ալ կ'արժէ այն բարձրագոյն օրէնքը. « Զափաւոր ըլլալու է: » Միշտ մտադիր ըլլալու ենք, որ ծխելը մեզի անհրաժեշտ սովորութիւն չլլայ, որ զմէք բոլորովին գերէ:



Ք Ե Վ Ե Բ Ե Բ Ե Ե Ն Տ Ե Ս Ս Վ Վ Ե Ն

Վիննա, 29 Դեկտեմբեր 1893:

Գաղղիոյ նախընթաց պաշտօնարարնին հրատարակուին բաւական ժամանակ տազնապատճամ՝ էր նոր մի կազմելու. շատ փորձերու ի դերու ելլելէն ետքը՝ յաջողեցաւ Երեսփոխանաց ժողովոյն զանրէցն՝ Փերիէ կազմուի նոր պաշտօնարարնն, որ աւելի միակերպ տարրներէ բաղկացեալ է քան նախընթացը: Անկեալ պաշ-

տօնարանին զաներէցն՝ Տիւրքիյի՝ եղաւ զաներէց Երեսփոխանաց ժողովոյ: — Երորակազմ պաշտօնարանն ի սկզբան ի գուր ճգնեցաւ մեծամասնութիւն մը գտնել իրեն կողմ, մինչեւ որ յանկարծական ոճիր մի ի գլուխ Կանցե Գայն: Երեսփոխանաց ժողովոյ նստի ժամանակ անշիշանական մը պայթուցիկ ումք մը յաջողեցաւ նետել, որով բազմաթիւ երեսփոխանք վիրաւորուեցան: Բարեբախտաբար մեռնող չեղաւ, եւ զաներիցուն աշարջութեամբ թէ ժողովը շնորհաւորեցան եւ թէ ներկայից դուրս գերծանիչն արգիւտեցաւ, որով նաեւ շարագործին ծերբակալումս յաջողեցաւ:

Այս դեպաց վրայ անիշխանականաց վրայ աւել մտադրութիւն սկսան ընել տէրութիւնք: Գաղղիա խտացուց իւր օրէնքները եւ շատ մ'օտար անիշխանականներ արտաքսեց: Սպանիա ալ մեծ մտադրութիւն ունի այս մասին, մասնաւոր թիւ ժամանակ յառաջ Պարզելունայի մէկ թատրոնի մէջ ումքի արձակմամբ թագմաթիւ անծինք սպանուեցան, եւ աւելի յառաջ ի Սանթամարտէր ումքի մաքսանենգութեան պատճառաւ շատ մեծ դժբախտութիւն մը պատահած էր, նոյն նստին օդ ելլելովն եւ բոլոր քաղաքին ահագին վնաս պատճառելով երկրաշարժէ մը շատ աւելի, վասն զի իբր նազար անծինք մեռան: Առաջարկուեցաւ այս խընդրոյ վրայ դնսպանաժողով մը գումարել, բայց արդինք չունեցաւ տակաւին:

Աւստրիոյ խորհրդանոցն երկար եւ ջերմ բանակոհներ ունեցաւ Փրակի վրայ վարչութեան բացատիկ վիճակ հրատարակելուն առթիւ: Այս տրամադրութեան առիթ տուած էին Փրակի մէջ պատահած այլեւայլ դէպքեր, զորոնք վարչութիւնը ծանր կը համարէր, իսկ հակառակորդք ոչ, եւ կը պնդէին թէ խնդիրն ըստ ինքեան Բոնիմացու ձգանց վրայ էր իրենց տէրութեան իրական եւ ոչ միայն անուանական վիճակ մը ստեղծելու: Երեսփոխանաց ժողովն վերջապէս հաւանեցաւ վարչութեան ըրած տրամադրութեան: Իրաց այս վիճակին մէջ կողմակցութեանց մեծ փոփոխութիւններ

եղան, եւ սլաւական երեսփոխանք դաշնակցական ակումբ մը կազմեցին:

Գերմանիոյ մէջ մեծ սաստկութեամբ մտուեցան վաճառականական դաշնակցութեանց նկատմամբ պայքարներ, որոնց մէջ պահպանողականք որ վարչութեան նեցուկն էին ցայտմ՝ անոր դէմ քուէ տուին: Բայց դաշնադրութիւնը ընդունուեցան զվաւորաբար կաթուղիկեայ կենդրոնական կողմակցութեան ծայնեքով, որ անոր համար տէրութեան կողմն ելաւ, վասն զի իւր առաջարկութիւնն՝ Յիսուսեանց դէմ՝ ի զօրութեան եղող օրէնքը քառնալու ընդունուեցաւ ժողովքէն: — Կը յուսացուի որ նաեւ Ռուսական-գերմանական վաճառականական դաշնադրութիւնն ի գլուխ ելլէ:

Իտալիոյ պաշտօնարանի տազնապատման շատ երկար տեւեց, եւ ծանարմէլի՝ որ ստանձնած էր նոր մը կազմելու պաշտօնը, յաջողութիւն չունեցաւ: Դրամական վիճակն այնպէս յոռի է (տարեկան իբր 250 միլիոն բաց ունի տէրութիւնը) որ դժուար է ստուգել երկրին զարգացման հոգ տանել կարենայ: Վերջապէս Քրիստի՛ այն որ բուն յայրն է այս անել վիճակին՝ կազմեց նոր պաշտօնարանն, որուն որչափ կենսեք եւ ինչ յաջողութիւն ունենալը տարակուսական է:

Ք Ր Վ Ա Ն Գ Վ Կ Ո Ւ Թ Ի Կ Ն

- ՌԵՐԻՒՐԵՆՑՆԵՐ**
 ԳՐԱԿԱՆ — Մար-Աբբաս մուրնացուց գիրքը. 1. — Նորագոյն աղբերք Եզնկայ Գողթացոյ. 6:
 ՊԵՏՄԵՐԱՆ — Հունգարահայոց մայրաքաղաք (Կեդրւոյ հայաբնակցանի) ի գիր եւ ի պատկերս. 11:
 ՀՆԱՆՈՍՈՒՄԱՆ — Թրակացիք եւ Հայք. 16: — Հայկական աշխատութիւնք Փէթթեր հայադիտի. 19:
 ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատենար. 21:
 ԼԵՋՈՒՄԱՐԱՆԱԿԱՆ — Եռնական փոխառեալ բառեր հայերէնին մեծ. 26:
 ԲԱՆԱՏԵՆՎՈՒԿԱՆ — Խանդեղ: — Յիշատակ. 29:
ՍԵՆՏԻՍԵԼԷ
 ՆՐԱՄԱՐԻՐՔ — Բազմապատկութեան դիւրագիւտ փոքր մը. 30:
 ՄԱՐԱՄԱՐԻՐՔ — Նորածին մանկանց աղումը. 30:
 ՏԵՏԵՆԱԿԱՆ — Ժխել. 31:
ՔՐՆՐԵՆՑՆԵՐ ԵՆՏԵՐԹԻՒՆԻՆ. 31:

ԿՐԱՍԱՐԱՆԳԻՉ ԵՐ ՊԵՏԱՍԽԱՆԱՅՈՒ ՆՍՐԱԿԻՐ
Կ. ՌԱՓԱԵԼ Վ. ՊԱՐՈՆՉ
 Վ Ի Ե Ն Ե Ն . Մ Ի Ի Բ Ը Ր Բ Ե Ն Ե Գ Ս Բ Ե Ն